ՀՀ ՊՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտարկվող Համաձայնագիրն ստորագրվել է 2000թ. հուլիսի 24-ին Վաշինգտոնում: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2002թ. նոյեմբերի 25-ից և դրա գործողության ժամկետը՝ 2009թ. նոյեմբերի 25-ին ավարտվելուց հետո մինչ օրս մեկ անգամ յոթ տարով երկարաձգվել է 2009թ. ապրիլի 30-ի ՀՀ ԱԺ Ն-139-4 որոշմամբ: Հիշյալ Համաձայնագրի գործողության հերթական ժամկետն ավարտվում է 2016թ. նոյեմբերի 25-ին:

Տարեսկզբին ամերիկյան կողմը ծանուցել է /ՀՀ ԱԳՆ՝ 16.02.2016թ. թիվ 1111/01372 գրություն/ դիտարկվող Համաձայնագրի ժամկետը ևս յոթ տարով երկարաձգելու իր պատրաստակամության մասին:

Մասնավորապես՝ Համաձայնագրով ամերիկյան կառավարությունը պարտավորվում է ՀՀ կառավարությանը /վերջինիս հայտերի հիման վրա/ անհատույց տրամադրել զանգվածային ոչնչացման զենքի տարածումը կանխարգելող համապատասխան սարքավորումներ, նյութական միջոցներ, տեխնոլոգիաներ, իրականացնել անձնակազմի ուսուցում և այլն: ՀՀ կառավարությունը պարտավորվում է նախատեսվող գործողություններն իրականացնելու նպատակով հեշտացնել ՀՀ տարածք ԱՄՆ կառավարության համապատասխան ներկայացուցիչների մուտքն ու ելքը: Համաձայնագիրը սահմանվում է նախատեսվող նյութական միջոցների փոխադրման կարգն ու պայմանները:

Համաձայնագրի մեջ փոփոխություն կամ ժամկետի երկարաձգում կարող է կատարվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

Առհասարակ, Համաձայնագիրը կարևոր իրավական հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև զանգվածային

ոչնչացման զենքի տարածմանը հակազդելուն ուղղված համագործակցության համար: Բացի այդ, Համաձայնագրով Հայաստանին հնարավորություն է ընձեռնված ներգրավվելու ԱՄՆ կողմից ծավալվող հակաահաբեկչական տարբեր ծրագրերում և խորացված փոխգործակցության շնորհիվ էլ ավելի պատրաստված մասնակցելու միջազգային բազմակողմ նախաձեռնություններում, ինչպիսիք են Միջուկային ահաբեկչությանը հակազդելու գլոբալ նախաձեռնությունը (GICNT), Միջուկային մաքսանենգության դեմ պայքարի ասպարեզում համատեղ գործողությունների ծրագիրը (NSOI), Տարածմանը հակազդող անվտանգության նախաձեռնությունը (PSI) և այլն: Ամերիկյան կողմը կարևորելով այս բնագավառում երկկողմ համագործակցությունը մինչ օրս եղել և պատրաստ է զգալի տեխնիկական, նյութական և տեղեկատվական օժանդակություն տրամադրել ռազմական սպառնալիքների նվազեցման ծրագրերում ընդգրկված (DTRP) երկրներին:

Կարևորվ է մատնանշել, որ ՋՈՋ-ի տարածմանը հակազդելու բնագավառում ՀՀ-ի սերտ համագործակցությունը ԱՄՆ-ի հետ: ԱՄՆ Նախագահի հրավերով ՀՀ Նախագահը մասնակցել է 2010թ., 2012թ., 2014թ. և 2016թ. անցկացված "Միջուկային անվտանգության գագաթաժողովներին":

Հաշվի առնելով վերոնշյալը, Համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգումը հնարավորություն կընձեռի ՀՀ-ին շարունակելու այս ոլորտում ԱՄՆ-ի հետ հաստատութենական համագործակցությունը և պաշտպանական-անվտանգային ոլորտում համագործակցության խորացումը ծառայեցնելու հայ-ամերիկյան հարաբերությունների առաջխաղացմանը՝ գլոբալ անվտանգության համակարգում միջազգային հանրության կողմից ՀՀ-ի համար հավելյալ անվտանգության ռեսուրսի ապահովման նպատակով:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է գտնում դիտարկվող Համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգումը:

ՀՀ պաշտպանության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար

Ս. ՕՀԱՆՅԱՆ